ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀՀ գյուղատնտեսությունում իրականացված պետական քաղաքականության, աջակցության ծրագրերի և ոլորտում տնտեսավարողների ջանքերի արդյունքում վերջին 12 ամիսներին գրանցվել են դրական տեղաշարժեր:

2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 993.37 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 7.2 %-ով: 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 120.9 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 4.8 %-ով: Նշված ժամանակահատվածում դրական տեղաշարժեր են գրանցվել նաև ձկնաբուծության և անտառային տնտեսության ոլորտներում:

3. 2014 թվականին շարունակվել են դրական տեղաշարժերը հողային ռեսուրսների, մասնավորապես վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է 74.2 %, նախորդ տարվա 71.0 %-ի դիմաց: 2015 թվականին նույնպես նախադրյալներ են ստեղծվել վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման ուղղությամբ: 2015 թվականի բերքի համար աշնանացանի տարածքները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 4.0 %-ով:

4. Գյուղատնտեսության արտադրության ծավալների ավելացումը հանգեցրել է երկրի համախառն ներքին արդյունքի մեջ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի որոշակի ավելացման: 2014 թվականին այն կազմել է 19.7 %, 2013 թվականի 19.6 %-ի դիմաց: 2014 թվականի 3.4 % ՀՆԱ-ի հավելաճի նպաստման 1.5 տոկոսային կետը (44.1 %-ը) բաժին է ընկել գյուղատնտեսության ոլորտին:

Ըստ առանձին ոլորտների կատարված աշխատանքների արդյունքներն են՝

<u>Բուսաբուծություն</u>

5. 2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 332.7 հազ. հա, նախորդ տարվա 318.1 հազ. հա-ի դիմաց: Ցանքատարածություններն ավելացել են 14.6 հազ. հա-ով: Նախադրյալներ են ստեղծվել 2015 թվականին այդ միտման շարունակման ուղղությամբ:

6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 605.73 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.9 %-ով: 2015 թվականի հունվար-մարտի տվյալներով բուսաբուծության ճյուղի համախառն արտադրանքը կազմել է 3.7 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 28.9 %-ով, վերջինս գլխավորապես ծածկած գրունտից ստացվող արտադրանքն է:

7. Բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները բնութագրող տվյալները ներկայացվում են ստորև.

(հազ. տոննա)

Մթերքները	2013թ.	2014թ.	2014 թ. 2013թվականի նկատմամբ, %
Հացահատիկ և հատիկաընդեղենային մշակաբույսեր	548.8	590.6	107.6
այդ թվում՝ ցորեն	311.6	338.2	108.5
Կարտոֆիլ	660.5	733.2	111.0
Բանջարեղեն	876.0	954.6	109.0
Բոստան	208.1	245.7	118.1
Պտուղ և հատապտուղ	338.1	291.1	86.1
Խաղող	240.8	261.3	108.5
Կուտակվել է խոտ	1497.5	1552.7	103.7

8. 2014 թվականին գրանցվել է գրեթե բոլոր (բացառությամբ պտղի, որը հետևանքն էր աննախադեպ ցրտահարության պատճառած կորուստների) մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ: Առավել մեծ աճ է ապահովվել հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, մասնավորապես ցորենի արտադրության բնագավառում: Ցորենի ինքնաբավության մակարդակը 2014 թվականին գնահատվում է 51.0-52.0 տոկոս, 2012 և 2013 թվականների համապատասխանաբար՝ 32.9 և 46.8 տոկոսի դիմաց: Բուսաբուծական մթերքների ավելացումն ապահովվել է ինչպես էքստենսիվ, այնպես էլ ինտենսիվ գործոնների հաշվին:

9. 2014 թվականին իրականացվել և 2015 թվականի անցած ամիսներին մեկնարկել են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանն ու հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

10. Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015 թվականին սպասվող բերքի համար կարևոր նշանակություն ունեցավ **«2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման»** ծրագիրը, որի շրջանակներում 2014 թվականին աշնանացանի համար ՀՀ մարզպետարաններից ներկայացված նախնական ցանկ-հայտերի հիման վրա տեղական սերմարտադրողներից ձեռք է բերվել 263.79 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու, որը պայմանագրային հիմունքներով հատկացվել է ՀՀ մարզերի 7 և ավելի հեկտար հողատարածք ունեցող 72 շահառուների: ՀՀ մարզպետարաններից ներկայացված պահանջարկը բավարարելու նպատակով, ծրագրում նախորդ տարի ընդգրկված շահառուներից ձեռք է բերվել 4017.9 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության և 195 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, որը տրամադրվել է մինչև 3 հա ցանք կատարել ցանկացող հողօգտագործողների:

11. Նշված ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման արդյունքում աշնանացանի ցանքատարածությունները 2014 թվականին կազմել են 106.8 հազ. հա, նախորդ տարվա 100.4 հազ. հա-ի դիմաց, որը լավագույն նախադրյալ է ցորենի համախառն արտադրանքի ավելացման համար:

12. **«ՀՀ 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրի»** շրջանակներում ՌԴ-ից հանրա-պետություն է ներկրվել 1906.3 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168.35 տոննա կապույտ առվույտի, 169.96 տոննա կորնգանի և 23.44 տոննա եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողից գնվել է 150 տոննա գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: Սերմացուի 1 կիլոգրամը հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հատկացվել է պետության կողմից ձեռք բերված արժեքից 35-50 % ցածր գներով՝ գարնանացան գարին՝ 130 դրամով, եգիպտացորենը՝ 350 դրամով, առվույտը՝ 1500 դրամով, կորնգանը՝ 370 դրամով: Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ մարզերում վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով իրացվել է ներկրված սերմացուների շուրջ 39 %-ը: ՀՀ կառավարություն 2014 թվականի օգոստոսի 14-ի N 941-Ն որոշմամբ ՀՀ մարզպետարանների միջոցով չիրացված սերմացուները հատկացվել են գյուղացիական տնտեսություններին՝ 2015 թվականի գարնանը ցանք կատարելու նպատակով:

13. **Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտա-դրության զարգացման ծրագիրը** մեկնարկել է նաև 2015 թվականի համար: Տվյալ ծրագրի շրջանակներում ՌԴ-ից ներկրվել է 1013.8 տոննա գարնանացան գարու, 5.3 տոննա եգիպտացորենի, 59.2 տոննա առվույտի, 247.8 տոննա կորնգան, ինչպես նաև «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից ձեռք է բերվել 120 տոննա գարնանացան գարու սերմացու: Վերջիններս պետության կողմից ձեռք բերված գներից էականորեն ցածր գներով

հատկացվել են գյուղատնտեսությունում տնտեսավարողներին արժեքից ավելի ցածր գներով: Ծրագրի իրականացումը լավագույն երաշխիք է գարնանացանի հաջող իրականացման և ցանքատարածությունների ընդլայնման համար:

14. 2014 թվականին «**Բույսերի պաշտպանության միջոցառումներ»** ծրագրի շրջանակներում բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները հիմք ունենալով՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պայքարի միջոցառումներ են իրականացվել հետևյալ բաղադրիչներով.

1) պայքար կրծողների դեմ՝ այս բաղադրիչով 2014 թվականի գարնանը և աշնանը ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 6591.6 կգ ցինկի ֆոսֆիդ, որով պայքար է իրականացվել 54.9 հազ. հա առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում,

2) պայքար անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ՝ 6300 հա անտառային տարածքներում:

3) պայքար մորեխների դեմ բաղադրիչով միջոցառումներ են իրականացվել առավել վարակված 795 հա տարածքի վրա:

15. **«Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիրը»** շարունակվում է նաև 2015 թվականին, որի շրջանակներում ընթացիկ տարում նախատեսվում է պայքարի միջոցառումներ իրականացնել շուրջ 69.0 հազ. հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և մինչև 13.0 հազ. հեկտար՝ անտառային տարածքներում:

16. 2014 թվականի վեգետացիայի ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ Արմավիրի մարզում հայտնաբերվել է ֆիլոքսերայով վարակված 11.07 հա այգի՝ 23 տնտեսության պատկանող հողատարածքներում: ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 92-Ն որոշման համաձայն 11.07 հա այգետարածքներում իրականացվել են բույսերի պաշտպանության միջոցառումներ, ընդ որում 9.24 հա այգու քանդման, միջոցառումների և այգետերերին սոցիալական աջակցություն տրամադրելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 48.1 մլն դրամ: Ներկայումս 9.24 հա այգիների քանդման աշխատանքներն ավարտված են: 1.83 հա այգիները չեն քանդվի, քանի որ այգին հիմնված է պատվաստված տնկանյութով, մեկուսացված է: Բույսերի պաշտպանության միջոցառումը կիրականացվի տնտեսավարողի միջոցներով:

17. Նախարարության 2014թ. կարևորագույն խնդիրներից է եղել **Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտում մորմազգի մշակաբույսերի ցեցի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպումը**: ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում իրականացվել են կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուների մոնիթորինգի աշխատանքներ, մասնավորապես տեղադրվել են 2900 հատ ֆերոմոնային թակարդներ: Մոնիթորինգի արդյունքների հիման վրա համայնքներում տարվել են խորհրդատվական աշխատանքներ՝ վնասատուի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու ուղղությամբ: Արդյունքում հողօգտագործողների կողմից իրականացված պայքարի համալիր միջոցառումների շնորհիվ զգալիորեն նվազել է բերքին ցեցերի կողմից հասցված վնասը, ավելացել են արտադրության ծավալները: Միջոցառումների իրականացման համար ծախսվել է 27.5 մլն դրամ:

18. Վերը նշված միջոցառումն իրականացվելու է նաև 2015 թվականին «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում՝ **«Հայաստանի Հանրապետությունում լոլիկի, ականող ցեց և կարտոֆիլի ցեց վնասատուների, մոնիթորինգի իրականացման նպատակով 2015 թվականի պետական աջակցության»** բաղադրիչով, որի շրջանակներում հանրապետության տարբեր մարզերի 10.1 հազ. հեկտար մորմազգիների ընտանիքին պատկանող մշակաբույսերի դաշտերում կիրականացվի մոնիթորինգ, վնասատուների հայտնաբերման և պայքարի միջոցառումների իրականացման

ժամկետների որոշման և վնասատուների դեմ պայքարի խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Հանրապետություն է ներկրվել 3300 ֆերոմոնային թակարդ, և ներկայումս ընթանում է դրանց տեղադրման գործընթացը:

19. 2014 թվականին շարունակվել է **«Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագիրը»**, որի շրջանակներում նախորդ տարվա ընթացքում ստուգվել են գյուղատնտեսական մշակաբույսերի 16.6 հազ. տոննա սերմեր, որից հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերի՝ 12.1 հազ. տոննա: 2015 թվականի ընթացքում՝ մինչև մայիսի 14-ն ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում ստուգվել են գյուղատնտեսական մշակաբույսերի 2.8 հազ. տոննա սերմեր, որից հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերի՝ 1.5 հազ. տոննա: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս սորտափորձարկումների միջոցով ընտրել և Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների համար երաշխավորել բույսերի նոր արդյունավետ սորտեր, որոնց օգտագործումը կապահովի բարձր և կայուն բերքատվություն:

20. **«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի»** շրջանակներում 2014 թվականին հետազոտվել են 172 համայնքի գյուղատնտեսական նշանակության 90.2 հազ. հեկտար հողեր: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել են 172 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: 2015 թվականին հետազոտվելու է հանրապետության 170 համայնքի 84.9 հազ. հեկտար հողատարածքից վերցված 28.3 հազ. հողանմուշում սննդատարրերի ապահովվածությունը՝ կատարելով 71.6 հազ. փորձաքննություն և որոնց հիման վրա կազմվելու և համայնքներին է հանձնվելու 170 ագրոքիմիական քարտեզ: Ծրագիրը հնարավորություն է տալիս 5 տարվա ընթացքում հանրապետության բոլոր համայնքների հողերն ենթարկել ագրոքիմիական հետազոտման, կազմել խոշոր մասշտաբի ագրոքիմիական քարտեզներ (բույսերի սննդառության համար կարևոր սննդատարրերով ապահովվածության մասին), մշակել պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք տրամադրվում են համապատասխան համայնքներին:

21. 2014 թվականին **առանձնակի կարևորվել են բնական աղետների հետևանքների մեղմման ուղղությամբ միջոցառումները:** 2014 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ցրտահարության հետևանքով վնասվել էր ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Վայոց ձորի, Սյունիքի և Տավուշի մարզերի 287 համայնքի 31716 գյուղացիական տնտեսության շուրջ 9185 հա այգետարածք, հիմնական վնասը կրել են ծիրանի այգետարածքները, հանրապետության 8890 հա բերքատու ծիրանի այգիներից շուրջ 6711 հեկտարը ցրտահարվել է: Վնասը գնահատվել է շուրջ 11.0 մլրդ դրամ:

20.1. Ցրտահարության պատճառած վնասները մեղմելու նպատակով մարզպետարան-ներից ներկայացված պահանջների հիման վրա հողօգտագործողներին անհատույց հատկացվել է 85 մլն դրամ արժեքով սերմացու, որով ցանք է կատարել ավելի քան 3300 հա տարածության վրա:

20.2. Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտա-դրության զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում իրացվող գարնանացան գարու սերմացուի արժեքը 200 դրամից իջեցվել է 130 դրամի:

20.3. 2014թ. մայիսի 24-ին տեղի ունեցած կարկտահարության հետևանքները մեղմելու նպա-տակով՝ ՀՀ Լոռու մարզում տուժած 11 համայնքների հողօգտագործողներին անհատույց հատկացվել է 95.25 տոննա ազոտական պարարտանյութ և 7620 լիտր դիզելային վառելանյութ:

20.4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիս-հուլիս ամիսներին, Լոռու մարզում մայիսին և հուլիսին տեղի ունեցած կարկտահարության հետևանքները մեղմելու նպատակով՝ ՀՀ Շիրակի մարզում տուժած 34 և ՀՀ Լոռու մարզում տուժած 15 համայնքներում «ՀՀ-ում 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի» շրջանակներում 2013թ. աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացած թվով 1822 և 2014թ. աշնանացան ցորենի

առաջին վերարտադրության սերմացուի հայտ ներկայացրած թվով 3650 տնտեսավարողների կողմից հետ վերադարձման ենթակա գումարների հավաքագրման հարցը հետաձգվել է և կքննարկվի 2015թ.հուլիս ամսին:

20.5. Ցրտահարությունից և փոթորկից տուժած համայնքներին պետական անհատույց աջակցություն ցուցաբերելու համար ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերին հատկացվել է 526.897 մլն դրամ՝ հողի և ջրի վարձավճարների փոխհատուցման նպատակով:

<u>Անասնապահություն</u>

21. Վերջին տարիներին հանրապետությունում անասնագլխաքանակի ավելացումը նախադրյալներ ստեղծեց անասնապահական մթերքների ծավալների ավելացման համար: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ տավարի գլխաքանակն ավելացել է 10.9 հազար գլխով կամ 1.6 %-ով և կազմել է 688.5 հազար գլուխ, որից կովերի գլխաքանակն ավելացել է 4.3 հազար գլխով կամ 1.4 %-ով և կազմել է 313.9 հազար գլուխ, ոչխարների և այծերի գլխաքանակն ավելացել է 28.3 հազար գլխով կամ 3.9 %-ով և կազմել է 745.8 հազար գլուխ, խոզերի գլխաքանակն ավելացել է 2.6 հազար գլխով կամ 1.9 %-ով, թռչունների գլխաքանակն ավելացել է 21.0 հազար գլխով և կազմել է 4 մլն 122 հազար գլուխ:

22. 2014 թվականին և 2015 թվականի անցած ամիսներին արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության նկատելի աճ:

23. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականին անասնապահության համախառն արտադրանքը կազմել է 387.64 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7.8 %-ով: 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 71.2 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 3.5 %-ով:

24. Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալների տվյալները ներկայացվում են ստորև.

	2013թ.	**2014թ.**	**2014թ.-ը 2013թ. նկատմամբ, %**
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	146.8	163.3	111.2
Կաթ, հազ. տոննա	657.0	700.4	106.6
Ձու, մլն հատ	615.2	638.3	103.8

25. Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, **«Տավարաբուծության զարգացման ծրագիրը»:** Հանրապետություն ներկրված շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներից արդեն ստացվել են բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված, տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող բարձրարժեք տոհմային հորթեր, որոնցից շուրջ 1100 գլուխը վաճառվել է հանրապետության գյուղացիական տնտեսություններին: Տեղական վերարտադրության արդյունքում ստացված տոհմային երինջների խմբաքանակից 200 գլուխ վաճառվել է Վրաստանի Հանրապետությանը: Մի շարք ընկերություններում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 7-8 հազար կգ կաթ, որը 3-4 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: 2014 թվականին իրականցվել է արտերկրից տոհմային կենդանիների գնման գործընթացը, որի շրջանակներում նախատեսվում է հաղթող ճանաչված գերմանական ընկերության միջոցով ձեռք բերել 225 գլուխ շվից և հոլշտին ցեղերի տոհմային երինջ: Կենդանիների ներկրումը նախատեսվում է ավարտել մինչև 2015 թվականի օգոստոսի 31-ը:

26. Հանրապետությունում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում խոզաբուծության և թռչնաբուծության զարգացմանը: 2014 թվականին ՀՀ Սյունիքի և Կոտայքի մարզերիում կառուցվել և գործում են ժամանակակից խոզաբուծական համալիրներ, որոնցում կիրառվում են արդիական տեխնոլոգիաներ, իսկ աշխատարար

գործընթացները կարգավորվում են ինքնակառավարման համակարգի միջոցով: Նշված խոզաբուծական համալիրներում բուծվում են խոզերի մսատու ուղղության կենդանիներ, և այդ նպատակով 2014 թվականին եվրոպական երկրներից ներմուծվել է դյուրոկ, լանդրաս և պետրեն ցեղի ավելի քան 200 գլուխ խոզ: Վերագործարկվել է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ-ն, որտեղ նախատեսվում է տարեկան արտադրել շուրջ 2000 տոննա թռչնի միս:

27. Հանրապետության համար հեռանկարային է համարվում **արդյունագործական ձկնաբուծությունը**: 2014 թվականին ձկան համախառն արտադրությունը կազմեց 13.9 հազար տոննա, ինչը 2.3 հազար տոննայով գերազանցեց 2013 թվականի ցուցանիշը: 2014 թվականին ձկնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 28.7 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 24.6 %-ով: 2015 թվականի հունվար-մարտին ձկնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 9.5 մլրդ դրամ, որը գերազանցում է 2014 թվակաանի նույն ժամանակահատվածի ցուցանիշը 23.1 %-ով: 2014 թվականին որոշակիորեն ավելացել է ձկան արտահանման ծավալը՝ կազմելով 2.4 հազ. տոննա:

28. Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու, մսի և մսամթերքի անվտանգությունն ապահովելու, շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու, ինչպես նաև բնակավայրերում և ճանապարհամերձ տարածքներում կենդանիների մորթը նվազագույնի հասցնելու նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից **«Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում»** ծրագրի շրջանակներում Հանրապետության 4 մարզերի 5 համայնքներում կառուցվել և շահագործման են հանձնվել սպանդանոցներ: Ներկայումս աշխատանքներ են տարվում շահագործման հանձնված սպանդանոցների բնականոն գործունեությունը աստիճանաբար ապահովելու ուղղությամբ:

<u>Անասնաբուժության ոլորտ</u>

29. 2014 թվականին և 2015 թվականի անցած ամիսներին հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու, ինչպես նաև մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացվում է **«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»** ծրագիրը: 2014 թվականին ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների 9 հիվանդություն-ների (2 ախտորոշիչ, 7 կանխարգելիչ) դեմ իրականացվել է 9.2 մլն միջոցառում: 2015 թվականի անցած ամիսներին ծրագրի շրջանակներում իրականացվել է 1.6 մլն միջոցառում:

Կատարված միջոցառումների արդյունքում հանրապետությունում ապահովվել է կայուն իրավիճակ:

<u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում</u>

30. 2014թ. գյուղատնտեսական մթերք վերամշակող ոլորտին բաժին է ընկել արդյունաբերության համախառն արտադրանքի 38.4 %-ը, իսկ 2015 հունվար-մարտի տվյալներով ոլորտի մասնաբաժինը կազմել է 33.6 %:

31. 2014 թվականին ավելի քան 20 տոկոսով ընդլայնվել են գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունները:

32. 2014թ. պտուղբանջարեղեն վերամշակող 41 և խաղող վերամշակող շուրջ 50 ընկերությունների կողմից մթերվել է 232.1 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող, այդ թվում՝ 34.1 հազար տոննա բանջարեղեն, որից՝ 23.3 հազար տոննա լոլիկ, 13.9 հազար տոննա պտուղ և 184.1 հազար տոննա խաղող: 2014 թվականին պտուղբանջարեղենի և խաղողի մթերման ընդհանուր ծավալը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 8.2 հազար տոննայով կամ 3.6 տոկոսով: 2014 թվականին խաղողի մթերման 1 կգ-ի միջին գինը կազմել է 152.2 դրամ, նախորդ տարվա 146.2 դրամի համեմատությամբ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է նաև պտուղբանջարեղենի մթերման գինը, մասնավորապես՝ լոլիկի մթերման միջին գինը գերազանցել է 40 դրամը նախորդ տարվա 36.9 դրամի դիմաց:

33. Արձանագրվել է 2014 թվականին մթերված պտուղբանջարեղենի և խաղողի դիմաց կատարվող վճարումների գործընթացի բարելավում: 2015 թվականի մայիսի 13-ի դրությամբ

պտուղբանջարեղենի մթերումների դիմաց կատարված վճարումները կազմում են 99.2 տոկոս կամ 6403.7 մլն դրամից վճարվել է 6350.1 մլն դրամը, իսկ խաղողի մթերումների դիմաց՝ 99.9 տոկոս կամ 28019.0 մլն դրամից վճարվել է 28004.6 մլն դրամը:

34. Կատարվել է 2015 թվականի պտուղբանջարեղենի մթերման պահանջարկի նախնական գնահատում, ըստ որի բանջարեղենի մթերման պահանջարկը կազմում է շուրջ 87 հազար տոննա, որից լոլիկինը՝ 65 հազար տոննա, իսկ պտղինը՝ շուրջ 30 հազար տոննա:

35. Ընթացիկ տարվա պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների կազմակերպման հետ կապված խնդիրների բացակայության և գյուղացիական տնտեսությունների արտադրած և մթերման առաջարկվող բերքի ամբողջ քանակը վերամշակող ընկերությունների կողմից մթերման պատրաստակամություն ներկայացնելու նպատակով կայացել է ՀՀ գյուղա-տնտեսության նախարարի տեղակալի մամուլի ասուլիսը, որին մասնակցել են նաև Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միության նախագահը և Պռոշյանի կոնյակի գործարանի գլխավոր տնօրենը:

36. Արտահանում իրականացնող տնտեսավարողներին աջակցելու նպատակով՝ մշակվել է գյուղատնտեսական մթերքի և սննդամթերքի արտահանում իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ուղեցույց, որը տեղադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքում:

37. Աշխատանքներ են իրականացվել՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2014թ. հոկտեմբերի 8-11-ը կայացած «Ոսկե Աշուն 2014» պարենամթերքի տոնավաճառին հայկական ընկերությունների արտադրանքի ներկայացման ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպված հայկական տաղավարը զբաղեցրել է շուրջ 800 քառ. մետր տարածք, որտեղ ներկայացվել է ավելի քան 30 ընկերությունների ագրոպարենային արտադրանք:

38. 2014 թվականին հանրապետությունից արտահանվել է 46.5 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն, խաղող և կարտոֆիլ 2013 թվականի նույն ժամանակահատվածի 64.5 հազ. տոննաի դիմաց: 2014 թվականի արտահանման ծավալների նվազումը 2013 թվականի համեմատությամբ պայմանավորված է ծիրանի բերքի սակավությամբ, քանի որ նախորդ տարի արտահանված թարմ պտուղբանջարեղենի ընդհանուր ծավալի ավելի քան 36 տոկոսը կազմել է ծիրանը:

39. 2015 թվականի մայիսի 25-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 19.8 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 22.8 հազ. տոննայի դիմաց: Արտահանման ծավալների կրճատումը հիմնականում պայմանավորված է արտաքին շուկայում կարտոֆիլի գնի նվազման հետևանքով արտահանման ծավալների կրճատմամբ, սակայն առաջիկա ամիսներին, հատկապես կորիզավոր պտղատեսակների ակնկալվող լավ բերքի պարագայում կանխատեսվում է արտահանման ծավալների էական ավելացում:

40. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նախաձեռնել է Հայաստանի մսամթերք արտադրողների միության ստեղծման գործընթացը: Մշակվել են միության կանոնադրության և հիմնադիր պայմանագրի նախագծերը, որոնք ներկայացվել են ոլորտի ընկերություններին և կազմակերպվել է վերջիններիս հետ քննարկում: 2014 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարի մոտ կայացել է Հայաստանի մսամթերք արտադրողների միության հիմնադիր ժողովը, որի ընթացքում հաստատվել է միության կանոնադրությունը, ընտրվել է միության նախագահ: Տարեվերջին միությունը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Ընթացքի մեջ է կաթ արտադրողների միության ստեղծումը:

41. Մթերումների գործընթացին զուգահեռ աշխատանքներ են իրականացվել նաև դրանց վաճառքի աջակցության ուղղությամբ: 2014 թվականին մայրաքաղաքի երկու վարչական շրջաններում հանգստյան օրերին, ընդհանուր առմամբ, կազմակերպվել է գյուղատնտե-սական մթերքների 109 տոնավաճառ, որոնց մասնակցության համար գրանցվել են 14411 գյուղացիական տնտեսություններ 158 գյուղական համայնքներից:

Յուրաքանչյուր տոնավաճառի մասնակիցների կողմից վաճառքի է ներկայացվել շուրջ 45 տեսակի գյուղմթերք: Միջին հաշվով 1 տոնավաճառի ընթացքում իրացվել է 45-50 տոննա գյուղմթերք, ընդհանուր առմամբ շուրջ 5000 տոննա:

<u>Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում</u>

42. **«Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»** ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 33822 տոննա ազոտական, 2645 տոննա ֆոսֆորական և 1619 տոննա կալիումական պարարտանյութեր: Ընդ որում, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը վերջին տարիներին ներկրվում են առաջին անգամ: Պարարտանյութերը վաճառվել են շուկայականից 40-50 %-ով ցածր գներով: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1829.7 մլն դրամ սուբսիդիա: 2014 թվականի ընթացքում մարզերում իրացվել են շուրջ 31770 տոննա ազոտական, 1174 տոննա ֆոսֆորական, 592 տոննա կալիումական պարարտանյութեր: Ծրագիրը շարունակվել է նաև 2015 թվականին:

43. ՀՀ հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը մշակելիս ծրագրում ներառվել է նաև 2014 թվականի գյուղատնտեսական տարվա ընթացքում փաստացի չիրացված՝ 2051.8 տոննա ազոտական, 1471.55 տոննա ֆոսֆորական և 1026.70 տոննա կալիումական պարարտանյութերը՝ դրանց իրացումը նախատեսելով 2015 թվականի գյուղատնտեսական տարվա ընթացքում: 2015 թվականին նախատեսված է 35315 տոննա ազոտական պարարտանյութի մատակարարում, ընթացիկ տարվա մայիսի 25-ի դրությամբ ներկրվել և բաշխվել է 28142.4 տոննա: Նախատեսված է հատկացնել 3120 տոննա ֆոսֆորական և 1592 տոննա կալիումական պարարտանյութ: 2015 թվականին պահեստավորված (2014 թվականից մնացորդ) 1471.55 տոննայից բաշխվել է 659.0 տոննա: Պահեստավորված 1026.7 տոննա կալիումական պարարտանյութից բաշխվել է 520.0 տոննա: 2015 թվականին նախատեսված է ՌԴ-ից 565 տոննա կալիումական և Չինաստանից 1648,45 տոննա ֆոսֆորական պարարտանյութի ներկրում հանրապետություն:

44. **«Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»** ծրագրի շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում նախատեսվել է հատկացնել 17 միլիոն 640 հազար լիտր դիզելային վառելանյութ, 1 լիտրը 350 դրամ՝ շուկայականից 25-26 %-ով ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1260.0 մլն դրամ սուբսիդիա: 2014 թվականի ընթացքում մարզերում իրացվել է 11 մլն 098.7 հազ. լիտր դիզելային վառելանյութ: Ծրագիրը շարունակվում է նաև 2015 թվականին և նախատեսվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողներին հատկացնել 14 մլն 331.8 հազ. լիտր: Ընթացիկ տարվա մայիսի 25-ի դրությամբ բաշվել է 1 մլն 653.3 հազ. լիտր դիզելային վառելանյութ: Ծրագիրը շարունակվում է:

<u>Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում</u>

45. Մշակվել է **«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի** նախագիծը: Վերջինս ենթարկվել է միջազգային փորձաքննության, որի արդյունքների հիման վրա այն լրամշակվել է: Ներկայումս նախագիծը ՀՀ հանրային խորհրդի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և այլ շահագրգիռ կողմերի հետ լրամշակվում է:

46. Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը: 2014 թվականին աջակցություն է ցուցաբերվել թվով 20, իսկ 2015 թվականի անցած ժամանակահատվածում 8 գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզերում ստեղծվել են շուրջ 91 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ: Երկրորդ ծրագրով, որը ներառում

է հանրապետության 8 մարզեր, 2015 թվականին արդեն իսկ ստեղծվել են 30 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ:

Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում

47. 2014 թվականին շարունակվել է **«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը»,** որի շրջանակներում տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: 2015 թվականից սկսած ծրագիրը բոլոր համայնքների համար իրականացվում է 6 տոկոսային կետին համարժեք սուբսիդավորմամբ:

48. 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2015 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 69.98 մլրդ դրամի 78.6 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է 2.63 մլրդ դրամ:

49. 2015 թվականի համար հատկացվել է 5.5 մլրդ դրամ վարկային ռեսուրս: Ընթացիկ տարում նախատեսվում է ևս 10.0 մլրդ դրամի հատկացում, որից 3.0 մլրդ դրամը՝ մայիս ամսվա ընթացքում:

50. 2011-2015 թվականներին ոլորտում դրական տեղաշարժերն արդյունք են նաև մատչելի վարկային ներդրումների:

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն

51. ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ գյուղատնտեսական տեխնիկա արտադրող բելառուսական ընկերությունների հետ բանակցությունների արդյունքում 2013-2014 թվականներին հանրապետություն է ներկրվել և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով ուղղակի վաճառքի ու լիզինգային եղանակով շուկայականից անհամեմատ ցածր գներով տնտեսվարող սուբյեկտներին և անհատներին է տրամադրվել 288 միավոր «ՄՏԶ 82.1» մակնիշի տրակտոր, որից՝ 168 միավորը 2014 թվականին և 130 միավոր տարբեր գյուղատնտեսական գործիքներ: Տրակտորների ուղղակի վաճառքի գինը կազմել է 6.7-7.2 մլն դրամ, իսկ լիզինգով տրամադրելու դեպքում տարեկան 9% տոկոսադրույքով, ներառյալ ռիսկերի ապահովագրումը, կանխավճար՝ գնի 20%-ի չափով, առավելագույն ժամկետը՝ 6 տարի տրակտորների համար, 3 տարի հարակից սարքերի համար:

52. ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ ՀՀ Գեղարքունիքի մարզի 4 գյուղական համայնքի լիզինգային եղանակով տրամադրվել է 4 միավոր «ՍԿ-5» մակնիշի հացահատիկահավաք կոմբայն: 2-րդ խմբաքանակից 4 մարզերի գյուղական համայնքներին հատկացվել է 8 միավոր հացահատիկահավաք կոմբայն: Աշխատանքները շարունակվում են:

53. **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»** վարկային ծրագրի շրջանակներում հանրապետություն է ներմուծվել և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներին է մատակարարվել 550 միավոր գյուղտեխնիկա, որից՝ 124 անիվավոր տրակտոր:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում

54. Մշակվել է Արարատյան դաշտում գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում (ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի երկուական համայնքներում) ոռոգման արդյունավետ համակարգերի ներդրմամբ ցուցադրական տնտեսությունների հիմնման պիլոտային ծրագիր: Ցուցադրական տնտեսությունների հիմնումը 4 հա-ի վրա նախատեսվում է իրականացնել ընթացիկ տարում:

Գիտության ոլորտ

55. 2014 թվականի մայիսից մինչև 2015 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում նախարարության գիտական կազմակերպություններում կատարվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 3 բազային ֆինանսավորմամբ ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի ու 3 պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաներ, որոնց շրջանակներում գիտական հետազոտությունները

հիմնականում ընթացել են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման ուղղությամբ:

Խորհրդատվության ոլորտ

56. 2014 թվականի մայիսից մինչև 2015 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում նախարարության գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների կողմից կազմակերպվել և անցկացվել է 1000 սեմինար և 824 դաշտային ուսուցում, իրականացվել է 22.4 հազ. խորհրդատվական միջոցառում, 155 փորձացուցադրական աշխատանք, եթեր է հեռարձակվել 95 ռադիոհեռուստահաղորդում: Տպագրվել և տարածվել է 457 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 112.6 հազ. ընդհանուր տպաքանակով: Թողարկվել է 158 համար թերթ՝ 211.5 հազ. ընդհանուր տպաքանակով:

57. ԳԱՄԿ-երի կողմից սեմինարների և խորհրդատվությունների մատուցման գործընթացում պարբերաբար քննարկվել է գյուղացիական տնտեսությունների խոշորացման թեման, մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում ընկերությունների կողմից կոոպերատիվների ստեղծման թեմայով անցկացվել է 254 սեմինար, սեմինարների ընթացքում քննարկվել է կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը, տպագրվել և տարածվել է 39 անուն տեղեկատվական թերթիկ:

Միջազգային համագործակցություն

58. 2014 թվականին և 2015 թվականի անցած ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ գյուղատնտեսության ոլորտում նպատակային ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

59. Ակտիվ համագործակցություն է ծավալվել մի շարք երկրների գյուղատնտեսության նախարարությունների հետ, ստորագրվել են գյուղատնտեսության բնագավառում համագործացության մասին համաձայնագրեր Հունաստանի, Ֆրանսիայի, Հորդանանի, Իտալիայի, Ավստրիայի գյուղատնտեսության նախարարությունների հետ:

60. 2014 թվականի հոկտեմբերի 18-ին Երևանում կազմակերպվել է «Հայագրոֆորում» միջազգային համաժողովը: Նախարարությունն ակտիվ մասնակցություն է ունեցել արտասահմանյան երկրներում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին և տոնավաճառներին:

Լիցենզավորման ոլորտ

61. 2014 թվականի մայիսից մինչև 2015 թվականի մայիսն ընկած ժամանակաշրջանում լիցենզավորման բնագավառում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) ստացվել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք իրականացնելու 25 հայտ, որից տրամադրվել են 23 լիցենզիա և 2 հայտ մերժվել է,

2) ստացվել է թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնելու 9 հայտ, որից տրամադրվել է 7 լիցենզիա, 2 հայտ մերժվել է,

3) ներկայացվել է անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման հավաստագիր ստանալու 38 հայտ, տրամադրվել է 38 հավաստագիր,

4) ստացվել է բույսերի պաշտպանության միջոցների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3808) ներմուծման մեկանգամյա լիցենզիա ստանալու 32 հայտ, որից տրամադրվել են 31 լիցենզիա և 1 հայտ մերժվել է,

5) ստացվել է հատիկային բերքի հավաքման կոմբայնի և կոմբայնի մոդուլի ներմուծման մեկանգամյա լիցենզիա ստանալու 2 հայտ, տրամադրվել է 2 լիցենզիա:

62. 2014 թվականի մայիսի 1-ից մինչև 2015 թվականի մայիսի 21-ն ընկած ժամանակահատվածում գանձվել է 575.8 մլն դրամ պետական տուրք:

Սննդամթերքի անվտանգություն

63. 2014 թվականի մայիս ամսվանից մինչև 2015 թվականի մայիս ամիսը սննդամթերքի անվտանգության բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1) իրականացվել են Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու համար գյուղատնտեսության ոլորտին առնչվող միջոցառումների իրականացման աշխատանքներ, ապահովելով Եվրասիական տնտեսական միության Հայաստանի Հանրապետության անդամակցության միջոցառումների ծրագրի Ճանապարհային քարտեզով նախատեսված ագրոարդյունաբերական համալիրի ոլորտի կետերի կատարումը,

2)ընդունվել են հետևյալ իրավական ակտերը. «Սննդամթերքի անվտանգության մասին», «Անասնաբուժության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Կերի մասին» ՀՀ օրենքները,

3) Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն ուղղված միջոցառումների շրջանակում մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են հետևյալ որոշումները.

- «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին» (N 1205-Ն, 30.10.2014),
- «Սանիտարական, անասնաբուժական, բուսասանիտարական միջոցառումների համարժեքության ճանաչման և ռիսկի գնահատման կարգը հաստատելու մասին» (N 1206-Ն, 30.10.2014),
- «Պարենային հումքի արտադրության ժամանակ կենդանական ծագում ունեցող սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների առավելագույն մնացորդային մակարդակները հաստատելու մասին» (N 1207-Ն, 30.10.2014),
- «Արտադրանքի (ապրանքների) սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի՝ պետական գրանցման վկայականի ձևը և այն տալու կարգը, պետական գրանցման վկայականների ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» (N 1208-Ն, 30.10.2014),
- «Սննդամթերքում ցեզիում-137 և ստրոնցիում-90 ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակները հաստատելու մասին» (N 1209-Ն, 30.10.2014),
- «Կենսաբանական ակտիվ հավելումների ցանկը, թույլատրելի մակարդակները, դրանց արտադրության մեջ օգտագործվող վիտամինների ձևերը և արգելված բույսերի ցանկը հաստատելու մասին» (N 1210-Ն, 30.10.2014),
- «Սննդամթերքի և սննդային միջավայրերի հետ շփման համար նախատեսված պոլիմերային և այլ նյութերից պատրաստված արտադրանքին ու նյութերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» (N 1211-Ն, 30.10.2014),
- «Հանքային ջրերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» (N 1213-Ն, 30.10.2014),
- «Անասնաբուժական վերահսկողության ենթակա օբյեկտների համատեղ ստուգումների, Եվրասիական տնտեսական միության տարածքում արտադրված ենթահսկման ապրանքների նմուշառման, Եվրասիական տնտեսական միության կազմակերպությունների և երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրների վարման միասնական կարգերը հաստատելու մասին» (N 1228-Ն, 30.10.2014),
- «Հայաստանի Հանրապետությունում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին» (N 1229-Ն, 30.10.2014),
- «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին և Հայաստանի Հանրապետության տարածքում անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական ընթացակարգը և անասնաբուժական վերահսկողության իրականացման

ժամանակ ընդունվող ակտերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» (N 1230-Ն, 30.10.2014),

- «Եվրասիական տնտեսական միության անդամ մի պետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս պետություն փոխադրվող, Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական տարածք ներմուծվող՝ անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրների օրինակելի ձևերը, դրանց ձևավորման և վարման ընթացակարգը, հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրների ձևերի տվյալների փոխանցման կանոնակարգի ու ձևաչափի վերաբերյալ տեխնիկական պայմանները հաստատելու մասին» (N 1231-Ն, 30.10.2014),

- «Սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային և հիգիենիկ միասնական պահանջները, սննդամթերքի անվտանգության և սննդային արժեքին ներկայացվող պահանջները, միասնական սանիտարական պահանջներով սահմանված ապրանքների ցանկը, պահածոյացված սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, ձկան, խեցգետնակերպերի, փափկամորթերի, երկկենցաղների, սողունների և դրանց վերամշակման մթերքների անվտանգության մակաբուծական ցուցանիշները հաստատելու մասին» (N 1237-Ն, 30.10.2014),

- «Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներից ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ արտահանվող կարանտին բուսասանիտարական հսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների կարանտին բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ընթացակարգը հաստատելու մասին» (N 1238-Ն, 30.10.2014),

- «Եվրասիական տնտեսական միության անդամ այլ երկրներից ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ այլ երկրներ արտահանվող բուսասանիտարական կարանտին հսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների բուսա-սանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ընթացակարգը հաստատելու մասին» (N 1239-Ն, 30.10.2014),

- «Շշալցված խմելու ջրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» (N 1240-Ն, 30.10.2014),

- «Սննդային հավելումների և բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» (N 1241-Ն, 30.10.2014),

- «Տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները (կանոնակարգերը) հաստատելու մասին» (N 1242-Ն, 30.10.2014),

4) համակարգվել են Հայաստանի Հանրապետությունից ձկան, ձկնամթերքի և ջրային ծագում ունեցող այլ արտադրանքի՝ Եվրամիության երկրներ արտահանման գործընթացը կանոնակարգող միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքները, մասնավորապես՝

5) մշակվել և ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 898-Ն որոշմամբ սահմանվել են Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության տարածք արտահանվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային առավելագույն քանակները, ինչպես նաև հաստատվել է

Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության տարածք արտահանվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքում մնացորդային նյութերի նկատմամբ հսկողության իրականացման համար անհրաժեշտ նմուշառման կարգը,

6) մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «2015-2017 թվականների Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննություններ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

7)համակարգվել և հետևողական աշխատանքներ են տարվել «Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային» ծրագրի իրականացման ուղղությամբ,

8) հետևողական աշխատանքներ են իրականացվել «Հայաստանում սպանդանոցների զարգացման աջակցության /GCP/ARM/004/GRE/» ծրագրի շրջանակներում փոքրածավալ սպանդանոցների հիմնադրման և գործունեության աջակցության ուղղությամբ,

9) երկու սպանդանոցներում՝ «Արալեռ» ՍՊԸ-ում և «Արզնի ԹՏԽ» ԲԲԸ-ում ներդրվել են վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿՀ/HACCP) և սննդամթերքի անվտանգության կառավարման (ՀՍՏ ԻՍՕ-22000 ստանդարտների շարք) համակարգերը: «Քարֆուր» ֆրանսիական ընկերությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել սպանդանոցների նկատմամբ, և ներկայումս աշխատանքներ են տարվում նշված ընկերության և սպանդանոցների միջև համագործակցության ուղղությամբ:

<u>Անտառային տնտեսություն</u>

64. 2014թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերում շաբաթօրյակների միջոցով իրականացվել են նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 112.6 հա տարածքի վրա: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտների հաշվին իրականացվել են նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 40.9 հա, նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամք 191.0 հա, հիմնադրվել է տնկարան 0.5 հա:

65. «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի և Լալվարի «անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացվել են անտառապատման աշխատանքներ 13.0 հա տարածքում և լրացման աշխատանքներ 44.4 հա տարածքի վրա:

66. Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի աջակցությամբ Արծվաբերդի, Ճամբարակի և Գյումրիի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառային հողերում իրականացվել են անտառապատման աշխատանքներ 35 հա տարածքում:

67. 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառպահախմբի աշխատողների կողմից կազմվել են ընդամենը 124 անտառխախտման արձանագրություն, որոից 2-ը՝ 35 գլուխ անասունների արածեցման, իսկ 122 արձանագրություն՝ 702 ապօրինի հատված ծառերի վերաբերյալ: Կազմված արձանագրություններից 23-ն ուղարկվել են ոստիկանության տարածքային բաժիններ՝ անտառխախտողներին հայտնաբերելու և համապատասխան ընթացք տալու նպատակով, իսկ 101 արձանագրություն՝ ՀՀ բնապահպանական պետական տեսչության մարզային բաժիններ:

68. Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից անտառտնտեսություն մասնաճյուղերի անտառային տարածքներում կատարված ստուգումներով արձանագրվել է ապօրինի հատված 361 ծառ:

69. 2014 թվականին «անտառտնտեսություն» մասնաճյուղերում արձանագրվել է հրդեհի 24 դեպք՝ 57.86 հա ընդհանուր տարածքով, որից 28.11 հա՝ անտառածածկ, իսկ 29,75 հա՝ ոչ

անտառածածկ տարածքի վրա: Անտառածածկ տարածքներում այրվել է հիմնականում խոտածածկը:

70. 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրացվել է 1726.5 խմ շինափայտ՝ 42.8 մլն դրամ գումարով, 40092.0 պխմ վառելափայտ՝ 320.1 մլն դրամ գումարով, 341 խմ տախտակ՝ 21.5 մլն դրամ գումարով:

71. Անտառամերձ համայնքների բնակչությանը 2014թ. անվճար տրամադրվելէ 52934 պխմ թափուկ վառելափայտ:

72. Ավիաքիմիական պայքարի միջոցառումներ են իրականացվել տերևակեր վնասատուներով և հիվանդություններով վարակված անտառածածկ տարածքներում (6.3 հազ. հա):

73. Ցեղասպանության 100 ամյակի հետ կապված ծառատունկ իրականացնելու նպատակով, 2015թ. գարնանը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերի տնկարաններից հանվել և անհատույց տրամադրվել է տարբեր մարզպետարաններին, քաղաքապետարաններին, կազմակերպություններին, համայնքներին և տնկարան չունեցող «անտառտնտեսություն» մասնաճյուղերին 199.7 հազ. հատ տնկանյութ: Նշված տնկանյութից 129.7 հազ. հատի տնկման աշխատանքներին ակտիվ մասնակցել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կենտրոնական ապարատի և «անտառտնտեսություն» մասնաճյուղերի աշխատակիցները:

74. 2015 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 30-ի դրությամբ «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառպահախմբի աշխատողների կողմից կազմվել է 23 անտառխախտման արձանագրություններ, որոնցից 22-ը 81 ապօրինի հատված ծառերի վերաբերյալ, իսկ 1-ը՝ որսի կանոնների և ժամկետների խախտման վերաբերյալ: Կազմված արձանագրություններից 7-ն ուղարկվել է ոստիկանության տարածքային բաժիններ՝ անտառխախտողներին հայտնաբերելու և համապատասխան ընթացք տալու նպատակով, իսկ 16 արձանագրություն՝ ՀՀ բնապահպանական պետական տեսչության մարզային բաժիններ:

75. 2015 թվականի հունվարի 1-ից մայիսի 15-ի դրությամբ «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում արձանագրվել է հրդեհի 5 դեպք՝ 5.87 հա ընդհանուր տարածքով, որից 1.5 հա՝ անտառածածկ, իսկ 4.37 հա՝ ոչ անտառածածկ տարածքի վրա: Անտառածածկ տարածքներում այրվել է խոտածածկը: Հրդեհները մարվել են մասնաճյուղերի, մարզային փրկարարական ծառայությունների աշխատակիցների համատեղ ուժերով:

76. Համակարգի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում գարնանային անտառ-պաթոլո-գիական ուսումնասիրությունները դեռևս ընթացքի մեջ են:

77. 2015թ. ապրիլի 30-իդրությամբ իրացվել է 192.3 խմ շինափայտ՝ 6229,0 հազ. դրամ գումարով, 1943 պխմ վառելափայտ՝ 18.34 մլն դրամ գումարով, 108,5 խմ տախտակ՝ 8.41 մլն դրամ գումարով:

<u>Անտառային պետական մոնիտորինգ</u>

78. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 25 N 198-Ն որոշման համաձայն պետական մարմիններից, կազմակերպություններից և այլ աղբյուրներից հավաքագրվել և վերլուծվել են անտառօգտագործման, անտառվերականգնման, անտառների պահպանության, բնափայտի մթերման և իրացման վերաբերյալ տեղեկություններ, որոնք դասակարգվել և մուտքագրվել են տվյալների շտեմարանում: Կատարվել են դաշտային այցելություններ ինչպես «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, այնպես էլ բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող անտառներում: «eCognition» ծրագրային համակարգով իրականացվել են 2011-2013թթ. Արբանյակային պատկերների վերծանված արդյունքների համադրման դաշտային աշխատանքներ:

<u>Վարկային ծրագրեր</u>

79. 2014 թվականին և 2015 թվականի անցած ամիսներին շարունակվել է 2011 թվականի երկրորդ կիսամյակից մեկնարկած <<**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների**

կառավարման և մրցունակության>> Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագիրը, որն իրականացվում է հանրապետության անասնապահությամբ մասնագիտացված Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի գյուղական համայնքներում, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, և եկամուտների մեծ մասը ստացվում է այդ ճյուղից:

80. Նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավման և այլ միջոցներով:

81. Ծրագրի առանցքային դրույթներից է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և դրանց գործունեությանը նպաստելու միջոցով մրցունակ անասնապահության զարգացման համար կարևոր նախադրյալ հանդիսացող բնական կերահանդակների, մասնավորապես, արոտների համակարգված օգտագործման, դաշտային կերարտադրության կառուցվածքի բարելավման և ընդլայնման ապահովումը, անասնապահական մթերքների արտադրողից մինչև սպառող շղթայի օղակներում ներկայումս առկա խնդիրների համակարգված լուծումը, արդյունքում՝ անասնապահության ճյուղում ծախսերի կրճատումը, առավել բարձր ավելացված արժեքի ստացումը և անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացումը:

82. Ծրագրի շրջանակներում նախատեսված 55 համայնքի փոխարեն, տնտեսված միջոցների ներգրավմամբ, նշված 6 մարզերի 91 համայնքներում ձևավորվել են **«Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ** և **«Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ**:

83. Ծրագրում ներառված 91 համայնքներում անասնապահությամբ զբաղված են 155.5 հազ. մարդ կամ 40.0 հազ. ընտանիք: Ծրագրի տիրույթում են շուրջ 240.0 հազ. հա արոտներ (հանրապետության 1055,3 հազ. հա արոտների 23 %-ը) և 75.0 հազ. պայմանական գլուխ գյուղատնտեսական կենդանի:

84. Արոտների արդյունավետ և համակարգված օգտագործման համար ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով համայնքների առաջարկները, իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- հանրապետության անասնապահությամբ մասնագիտացված 6 մարզերում (Արա-գածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի) նախատեսված 55-ի փոխարեն 91 համայնքներում ձևավորվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ: Ստեղծված կոոպերատիվների գործունեությունը բարելավելու, դրանց կարողությունները հզորացնելու համար ծրագրի շրջանակներում կոոպերատիվներին տրամադրվում է տարբեր բնույթի աջակցություն, այդ թվում՝
- արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 550 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 124 անիվավոր տրակտոր,
- անասնապահության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու և բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման համար իրականացվել է արոտների ջրարբիացում (մասնավորապես, կառուցվել է 165 կմ ջրագիծ, տեղադրվել է 204 խմոց),
- 49000 քառ. մետր տարածության վրա կատարվել են արոտների ճանապարհների անցանելիության ապահովման աշխատանքներ,

- հեռագնա արոտավայրերում կառուցվել են 8050 քառ. մետր ընդհանուր մակերեսով 12 փարախներ, անասնապահի 12 տնակներ,
- ՀՀ Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում շահագործման են հանձնվել 2 անաս-նաբուժական սպասարկման կենտրոններ: Նշվածի հետ մեկտեղ արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներին տրամադրվում է նաև խորհրդատվություն և այլ բնույթի աջակցություն,

Ծրագրի իրականացման արդյունքում ընդգրկված համայնքներում, միջին ժամկետում, գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը բարձրացել է 20-25.0 %-ով, ավելացել է անասնագլխաքանակը:

85. Հաշվի առնելով ծրագրի դրական արդյունքները՝ 2015 թվականի երկրորդ եռամսյակից մեկնարկել է**«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»** երկրորդ ծրագիրը, որը նախատեսվում է ավարտել 2019 թվականին: Ծրագրի շրջանակներում **Համայնքների արոտավայրերի և անասնապահության բաղադրիչով** նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ՀՀ 8 մարզի՝ Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ, շուրջ 100 համայնքում իրականացնել անասնապահության զարգացմանն ուղղված ծրագրեր: Մասնավորապես, բոլոր համայնքներում հիմնադրել արոտօգտագործողների կոոպերատիվներ (2015թ. արդեն իսկ ձևավորվել է 30 կոոպերատիվ), տրամադրել անասնակերի արտադրության համար անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա (շուրջ 800 միավոր, այդ թվում՝ 170 միավոր տրակտոր), ըստ համայնքների անհրաժեշտության արոտավայրերում կառուցել ջրարբիացման համակարգեր (նախնական հաշվարկներով նախատեսվում է ջրարբիացնել շուրջ 160 հազ. հա արոտներ, կառուցել 240 կմ ջրագիծ, տեղակայել 290 խմոց), աջակցել կոոպե-ռատիվներին գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման գործում, բարեկարգել արոտավայրեր տանող ճանապարհները՝ ապահովել արոտավայրերի հասանելիությունը, աջակցել կոոպերատիվներին կաթի հավաքման և վերամշակման կետերի հիմնման աշխատանքներում:

86. Նշված միջոցառումների իրականացումը կնպաստի համայնքներում արոտների օգտագործման վիճակի բարելավմանը, անասնապահական մթերքների արտադրության ավելացմանը, արդյունավետության բարձրացմանը, անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և ստացվող գյուղմթերքի որակի բարձրացմանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի և 2015 թվականի անցած ամիսների գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համա-պատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը, արդյունքում նախադրյալներ են ստեղծվել գյուղատնտեսության կայունության և զարգացման համար: